

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանը հայտարարում է ՀՀ Լոռու մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի առաջատար մասնագետի (ծածկագիր՝ 65-3.2-79) քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնելու մասին

Բաժնի առաջատար մասնագետը՝ իրականացնում է Մարզում գործող հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների /այսուհետ՝ ՀԳՄՍՍ/ հետ տարվող կազմակերպական աշխատանքներ, ՀԳՄՍՍ-ի Մարզում գործունեություն ծավալող միջազգային կազմակերպությունների ներկայացուցչությունների և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության ապահովման աշխատանքներ, ՀԳՄՍՍ-ի գործունեության ուսումնասիրություններ և առաջարկություններ է ներկայացնում Բաժնի պետին: Իրականացնում է Մարզի տարածքում ոստիկանության և ազգային անվտանգության ինչպես նաև զինապարտների հաշվառման, գորակոչի, գորահավաքի և վարժական հավաքների կազմակերպման խնդիրների վերաբերյալ Մարզպետի մոտ անցկացվող խորհրդակցությունների անցկացման աշխատանքներ, արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության ոլորտի ՀԳՄՍՍ-ի ղեկավարների կողմից Մարզպետի համապատասխան հանձնարարականների և կարգադրությունների կատարման ընթացքի ուսումնասիրման աշխատանքներ, մարզի տարածքում հարկային մարմինների գործունեության, կապի, էլեկտրամատակարարման, ջրահեռացման և գազամատակարարման ծագած խնդիրների լուծման առնչությամբ համապատասխան ՀԳՄՍՍ-ի ղեկավարներից սահմանված կարգով ստացված տեղեկատվության մշակման և վերլուծման աշխատանքներ, մասնակցում է Մարզի տարածքում քաղաքացիական պաշտպանության և հակահամաճարակային միջոցառումների կազմակերպման, արտակարգ իրավիճակների վերացման, տարերային և տեխնոլոգիական աղետների կանխման, վտանգի նվազեցման և հետևանքների վերացման ուղղությամբ կազմակերպվող և համակարգվող աշխատանքներին, ինչպես նաև օպերատիվ բնույթի միջոցառումների իրականացմանը, զինված ուժերի գորահավաքային պատրաստության և գորակոչի իրականացման ուղղությամբ ՀՀ օրենսդրության պահանջների իրականացման նպատակով համապատասխան միջոցառումների կազմակերպման աշխատանքներին: Բաժնի պետի հանձնարարությամբ կազմակերպում է ՀԳՄՍՍ-ների գործունեությանը վերաբերվող քաղաքացիների դիմում-բողոքների քննարկումը և պատասխանների նախագծերի ներկայացումը, ինչպես նաև պաշտոնի անձնագրով սահմանված այլ գործառնություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է

- ունի բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության պաշտոններում կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն մեկ տարվա ստաժ, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երկու տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.

. -համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն
-անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների եւ ունակությունների տիրապետում

-Դիմող ՀՀ քաղաքացիները Լոռու Մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝
-գրավոր դիմում

- կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենները, աշխատանքային գրքույկի պատճենը՝ բնօրինակի հետ միասին,
- արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին կամ համապատասխան տեղեկանք մեկ գունավոր լուսանկար՝ 3X4 սմ չափսի անձնագրի պատճենը

Պայմանագրի գործողության ժամկետն է՝08.04.2021թ.

Աշխատավարձի չափը՝ 150799 ՀՀ դրամ

Փաստաթղթերն ընդունվում են՝ ա/թ սեպտեմբերի 11-ից

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 13-ը սեպտեմբերի 2018թ.

ՀՀ Լոռու մարզպետարանի ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնելու համար կարող եք դիմել ՀՀ Լոռու մարզպետարան (ք. Վանաձոր, Հայքի հրապարակ, հեռ.2-10-24, էլ. հասցե՝ lori.andznakazm@mta.gov.am)